# ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԿԵՐՊԱՐՆԵՐԸ. ՀՈՎԻՎՆԵՐ

## ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ՂՈՒԿ. 2.1-20

*1 Այն օրերին Օգոստոս կայսրից հրաման արձակվեց, որ ամբողջ երկրում մարդահամար անցկացվի:*
*2 Այս առաջին մարդահամարը եղավ Ասորիքի կուսակալ Կյուրենիոսի ժամանակ:*

## I. ՀԻՍՈՒՍԸ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԿԵՐՏՈՂՆ Է:
## JESUS IS THE HISTORY MAKER.

- ***Գաբրիելի կողմից Դանիելին 9.24-27-ում փոխանցված մարգարեությունը կապված է Քրիստոսի կյանքի հետ:***

*Դանիել 9.25-26 – Եվ իմացի՛ր ու հասկացի՛ր, որ Երուսաղեմը վերակառուցելու վճիռն արձակելուց մինչև Մեսիայի՝ Առաջնորդի գալը յոթ յոթնյակ և վաթսուներկու յոթնյակ կա. հրապարակը և պարիսպը պիտի վերակառուցվեն, սակայն տագնապալից ժամանակներում: Եվ վաթսուներկու յոթնյակից հետո Մեսիան պիտի վերացվի, և ոչինչ չպիտի ունենա:*

*3 Եվ բոլորը գնում էին արձանագրվելու՝ ամեն մեկն իր քաղաքը: 4 Հովսեփն էլ Գալիլեայից՝*
*Նազարեթ քաղաքից, գնաց Հուդա՝ Դավթի քաղաքը, որ Բեթլեհեմ է կոչվում. որովհետև նա Դավթի*
*տնից ու սերնդից էր. 5 որպեսզի այնտեղ արձանագրվեր իր նշանածի՝ Մարիամի հետ, որ հղի էր:*

## II. ՀԻՍՈՒՍԸ ԾՆՎԵԼ Է ԴԱՎԹԻ ԾՆՆԴԱՎԱՅՐՈՒՄ:
## JESUS IS BORN IN DAVID'S BIRTHPLACE.

- ***Աստված Դավթին խոստացել էր Սամուել մարգարեի միջոցով.***

*Բ ԹԱԳ. 7.16 – Եվ քո տունն ու քո թագավորությունը հավիտյան պիտի ապահով լինեն քո առաջ, և քո աթոռը հաստատ պիտի մնա հավիտյան:*

- ***Միքիան նաև մարգարեացել էր Բեթլեհեմի մասին՝ որպես Մեսիայի ծննդավայր (Միքիա 5.2):***

*Բայց դու, ո՛վ Բեթլեհեմ Եփրաթա, փոքր ես Հուդայի տոհմերի մեջ, սակայն քեզանի՛ց պիտի դուրս գա ինձ համար նա, որ իշխանավոր պիտի լինի Իսրայելին: Եվ նրա ծագումը շատ հին է, հասնում է մինչև հնագույն օրերը:*

*Ղուկաս 3.23, 38 – Երբ Հիսուսը իր գործն սկսեց, երեսուն տարեկան էր, և*
*ինչպես կարծվում էր, որդին էր Հովսեփի, Հեղիի... 38 Ենովսի, Սեթի, Ադամի, և*
*նա՝ Աստծու:*

*6* *Երբ նրանք այնտեղ էին, նրա ծննդաբերելու օրերը լրացան: 7 Եվ ծնեց իր անդրանիկ որդուն, խանձարուրի մեջ փաթաթեց, դրեց մսուրի մեջ, որովհետև իջևանատանը նրանց համար տեղ չկար:*

## III. ՀԻՍՈՒՍԸ ԾՆՎԵԼ Է ՀԱՍԱՐԱԿ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ:
## JESUS IS BORN IN HUMBLE CIRCUMSTANCES

*7 Եվ ծնեց իր անդրանիկ որդուն, խանձարուրի մեջ փաթաթեց, դրեց մսուրի մեջ, որովհետև իջևանատանը նրանց համար տեղ չկար:*

### *Հիսուսը ծնվել է մի աղքատ միջավայրում:*

*Փիլիպպեցիներին 2.6-8 – որ Աստծու բնությունն ունենալով՝ Աստծուն հավասար լինելը հափշտակություն չհամարեց, այլ ինքն իրեն ունայնացրեց և ծառայի կերպարանք առնելով, մարդկանց նման լինելով ու կերպարանքով մարդու պես հայտնվելով՝ ինքն իրեն խոնարհեցրեց ու հնազանդ եղավ մինչև մահ, այն էլ՝ խաչի մահ:*

### *Հիսուսը ծառայում էր աղքատներին:*

*Ղուկ. 4.18-19 - 18 Տիրոջ Հոգին ինձ վերայ է. որի համար էլ օծեց ինձ. նա ինձ ուղարկել է աղքատներին աւետարանելու, սրտով կոտրուածներին բժշկելու, 19 Գերիներին թողութիւն քարոզելու, եւ կոյրերին տեսութիւն. խոցուածներին արձակելու ազատելով, Տիրոջ ընդունելի տարին քարոզելու:*

*Մարկոս 10.45 – Որովհետև Մարդու Որդին նույնպես չեկավ, որ իրեն ծառայեն, այլ որ ինքը ծառայի ու շատերի համար իր կյանքը որպես փրկագին տա:*

### *Հրեշտակները ծառայում էին Հիսուսին:*

*10 Եվ հրեշտակը նրանց ասաց. Մի՛ վախեցեք, որովհետև ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում, որ ամբողջ ժողովրդին է լինելու. 11 Թէ այսօր Դավթի քաղաքում ձեզ համար Փրկիչ ծնվեց. որ է Քրիստոս Տէրը:*

*8 Այնտեղ դաշտում մնացող հովիվներ կային, որոնք գիշերն իրենց հոտերն էին պահում: 9 Եվ ահա*
*Տիրոջ հրեշտակը նրանց առաջ կանգնեց. Տիրոջ փառքը ծագեց նրանց շուրջը, ու մեծ վախով*
*վախեցան: 10 Եվ հրեշտակը նրանց ասաց. Մի՛ վախեցեք, որովհետև ահա ձեզ մեծ ուրախություն եմ*
*ավետում, որ ամբողջ ժողովրդին է լինելու. 11 Թէ այսօր Դավթի քաղաքում ձեզ համար Փրկիչ*
*ծնվեց. որ է Քրիստոս Տէրը: 12 Եւ Սա ձեզ համար նշան կլինի. մի երեխա կգտնեք խանձարուրով*
*փաթաթված ու մսուրի մեջ դրված: 13 Եվ հանկարծ այն հրեշտակի հետ հայտնվեց երկնավոր զորքի*
*մի բազմություն, որ օրհնում էր Աստծուն և ասում. 14 Փա՜ռք Բարձրյալ Աստծուն, երկրի վրա՝*
*խաղաղություն, ու մարդկանց մեջ՝ հաճությունն: 15 Եվ երբ հրեշտակները նրանց մոտից երկինք*
*բարձրացան, հովիվներն իրար ասացին. Եկեք մինչև Բեթլեհեմ գնանք ու տեսնենք տեղի ունեցածը,*
*որը Տերը ցույց տվեց մեզ: 16 Շտապելով եկան և գտան Մարիամին ու Հովսեփին և երեխային՝ մսուրի*
*մեջ պառկած: 17 Եվ երբ տեսան, ճանաչեցին նրան այն խոսքից, որ իրենց ասվել էր երեխայի մասին:*
*18 Բոլոր լսողներն էլ զարմացան հովիվների պատմածների վրա: 19 Իսկ Մարիամն այդ ամենը*
*պահում էր իր սրտում և մտածում էր: 20 Հովիվները հետ դարձան՝ Աստծուն փառաբանելով և*
*օրհնելով այն ամենի համար, որ լսեցին ու տեսան, ինչպես որ ասվել էր իրենց:*

## IV. ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՐԵՔ ՆՇԱՆՆԵՐԸ:
## THE THREE SIGNS OF CHRISTMAS.

*12 Եւ Սա ձեզ համար նշան կլինի. մի* ***երեխա*** *կգտնեք* ***խանձարուրով*** *փաթաթված ու* ***մսուրի*** *մեջ դրված:*

- ***Իսրայելի նշանը «Ահա կույսը կհղիանա»:***

*«Ահա կույսը կհղիանա և որդի կծնի, և նրան կկոչեն Էմմանուել» (Ես. 7.14), որ նշանակում է «Աստված մեզ հետ»:*

- ***Մոգերի նշանը Բեթլեհեմի աստղը:***

*Թվոց 24:17 – Տեսնում եմ նրան, բայց ոչ հիմա, Զննում եմ նրան, բայց ոչ մոտից. Մի աստղ է ծագում Յակոբից, Մի մական է բարձրանում Իսրայելից, Խփում է Մովաբի ճակատին Եվ բնաջինջ անում Սեթի բոլոր որդիներին:*

- ***Յովիվների նշանը երեխան,խանձարուր, և Մսուրը :***

*Եվ սա նշան կլինի՞ ձեզ համար: Ինչպե՞ս կարող է բարուրը «նշան» լինել, եթե բոլոր երեխաները փաթաթված են: «Մսուրում» երեխա, այո, դա նշան կլինի, բայց ի՞նչ կասեք այս մսուրի մասին:*

*Յովիվները նորածին գառներին սերտորեն փաթաթում էին հատուկ նշանակված տաճարային կտորներով, և դնում մսուրի մեջ, որպեսզի անցնեն մաքրման շրջանը մինչ նրանք հետազոտվում էին արատների համար (ինչպես պահանջվում էր Օրենքով): Նշանակված ժամին հովիվները փոխանցում էին գառներին՝ ընտրելով միայն անդրանիկ արուներին, որոնք ունեին անբիծ կամ արատ, և նրանց պատրաստում էին Զատկի տոնին տաճարում մատուցվող զոհաբերության համար: Այնտեղ նրանց գնում էին այն մարդիկ, ովքեր ցանկանում էին զոհ մատուցել Տիրոջ առաջ՝ իրենց մեղքերը քավելու համար:*

*Յովիվների նշանը մսուրն էր: Նրանք գտան Փրկչին՝ Քրիստոս Տիրոջը, փաթաթված ճիշտ այնպես, ինչպես փաթաթում էին իրենց թանկագին գառը նրա ծնվելուց հետո:*

## Ի՞ՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՅՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ